

**Հ.Բ.Ը.Միութեան Նախագահ Տիար Պերճ Սեդրակեան
կը պատասխանէ Հայաստան-Թուրքիա
յարաբերութիւններու բնականոնացման գործընթացին
կապակցութեամբ Միութեան կողմնորոշումին
վերաբերեալ հարցումներուն**

Ուրբաթ 16 Յոկտեմբեր 2009ի երեկոյեան, Միութեան Հարաւային Գալիֆորնիոյ Փասատինայի կեդրոնին մէջ, Հ.Բ.Ը.Մ.ի Նախագահը՝ Պերճ Սեդրակեան եւ Կեդրոնական Վարչական Ժողովի անդամներ, Միութեան մասնաճիւղերու անդամակցութեան եւ վարչական պատասխանատուներու մասնակցութեամբ ժողովրդային լսարան մը ունեցան, որուն ընթացքին պատասխանեցին Բանակցութիւններու ի նպաստ Հ.Բ.Ը.Մ.ի որդեգրած դրական կողմնորոշումին շուրջ հարցումներու:

Ներկայ թղթակցութեամբ կը ներկայացնենք հանդիպումի ընթացքին արժարժուած գլխաւոր մտահոգութիւնները եւ Նախագահ Պերճ Սեդրակեանի պատասխանները տրուած հարցումներուն:



ՀԲԸՄի Նախագահ Պերճ Սեդրակեան (կեդրոն), Կեդրոնական Վարչական Ժողովի անդամներ՝ Երուանդ Զօրեանի, Սեմ Սիմոնեանի, Սինան Սինանեանի, (ամենէն աջ) Գերոյ Ասլանեանի, ինչպէս նաեւ ՀԲԸՄի Հարաւային Գալիֆորնիոյ Շրջանակային Յանձնաժողովի Ատենապետ Պերճ Շահպազեանի

Հարցում - Հ.Բ.Ը.Մ.ը առաջիններեն էր որ դիրք ճշդեց ի նպաստ Հայաստան-Թուրքիա յարաբերութիւններու բնականոնացումի նախաձեռնութեան, ինչպէս նաեւ այդ գործընթացին ի նպաստ յայտարարութիւնը ստորագրող հինգ կազմակերպութիւններեն մին կը հանդիսանար: Ինչպէ՞ս կը բացատրէք Հ.Բ.Ը.Մ.ի դիրքորոշումը:

Հայ-Թրքական յարաբերութիւններու բնականոնացումին եւ սահմաններու բացումին կապակցութեամբ, Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութիւնը կը հաւատայ, որ Հայաստանի Հանրապետութեան նախագահը ցուցաբերած է պետական ձեռնհաս ղեկավարէ մը պահանջուած առաջնորդի արի կեցուածք եւ շրջանային ու միջազգային դիւանագիտական իրադրութեան խոր եւ իրատես հասկացողութիւն: Հետեւաբար թիկունք կը կանգնի անոր նախաձեռնութեան:

Կը գիտակցինք թէ այս նախաձեռնութիւնը դժուար եւ պատասխանատու քայլ մըն է որովհետեւ լուրջ մարտահրաւերներ կը ներկայացնէ Նախագահին եւ համայն Հայութեան համար: Կարելոր կը նկատենք որ հայրենի պետական ղեկավարները ունենան հայ ժողովուրդի վստահութիւնը եւ զօրակցութիւնը, որպէսզի ինքնավստահութեամբ վարեն նախագիծերու հիմամբ կատարուելիք բարդ եւ երկարաշունչ բանակցութիւններու գործընթացը, նաեւ դիմագրաւեն իւրաքանչիւր քայլափոխին ներկայացող խոչընդոտները:

Բոլորս գիտենք թէ բանակցութիւնները երկար եւ փորձանաւոր ճամբայ ունին կտրելիք: Անհրաժեշտ է որ Հայութիւնը ճիշտ ըմբռնէ եւ կարենայ կողմնորոշուիլ ի յայտ եկող իւրաքանչիւր քաղաքական ռազմավարութեան եւ դժուար ընտրանքի դիմաց: Թէեւ վերջնական արդիւնքը կարելի չէ նախատեսել, սակայն առկայ հարցերու լուծումին համար ճիգերու ներդրումը դրական նախաձեռնութիւն մըն է: Պետք է յիշենք անցեալը, իրատեսութեամբ պայքարինք մեր արդարացի իրաւունքներուն համար եւ ձգտինք մեր ազգի եւ հայրենիքի հզօր ապագայի կերտումին:

Հարցում - *Հայաստանի Հանրապետութեան Նախագահին Սփիւռքի գլխաւոր գաղթօճախներուն տուած այցելութեան կապակցութեամբ ի՞նչ է ձեր տեսակէտը: Չէ՞ք խորհիր որ Թուրքիոյ հետ երկխօսութեան նախաձեռնութիւնը պառակտում ստեղծեց հայ ժողովուրդին մօտ եւ կրնայ պատճառ դառնալ Հայաստան եւ սփիւռք անջատումին, ինչպէս շատեր կը մատնանշեն:*

Հ.Հ. Նախագահին տուած այցելութիւնը Սփիւռքի գլխաւոր գաղթօճախներուն եւ կազմակերպութիւններուն, առիթ հանդիսացաւ սփիւռքահայ տարբեր խմբաւորումներու կողմէ տեսակէտներու եւ կեցուածքներու անկեղծ եւ երբեմն բուռն արտայայտութեանց: Համոզուած ենք, որ ի վերջոյ, իբր պետութեան ղեկավար, Նախագահ Սարգսեան կշռադատելով բոլոր տուեալները եւ տեսակէտները, պիտի կողմնորոշուի ի շահ Հայաստանին եւ հայ ժողովուրդին:

Հայ-Թրքական պետական յարաբերութիւններու բնականոնացումի նախաձեռնութեան կապակցութեամբ ցուցաբերուած կեցուածքներեն ի յայտ եկաւ, որ

հայասփիւռքը տուեալ իրադրութեան իր հասկացողութեամբ միօրինակ հաւաքականութիւն մը չէ եւ կարելի չէ պարտադրել որ այդպէս ըլլայ: Սակայն պետք է իրարմէ զանազանել գործելակերպի հասկացողութիւնը եւ սկզբունքային հարցերու նկատմամբ կեցուածքը: Տուեալ կացութեան կապակցութեամբ տեսակետներու տարբերութիւնները յարգելի են եւ պառակտում չեն նշանակեր, երբ սկզբունքային հարցերու շուրջ համախոհութիւնը առկայ է:

Մեր պարագային, գործնապաշտ կեցուածքով, մենք կը հաւատանք, որ ներկայ համաշխարհայնական քաղաքական իրադրութեան մէջ, աւելի իրատես մօտեցում է մեր արդար իրաւունքները հետապնդել դիւանագիտութեան եւ ուղղակի բանակցութիւններու ճամբով, քան այլ միջոցներով, որոնք ցարդ գրեթէ ամբողջ դարաշրջան մը դրական որեւէ շօշափելի արդիւնք չեն տուած:

Հարցում - Դուք յիշեցիք թէ համաձայնութեան նախագիծերը նախապայմաններ չեն որոշեր սակայն կը ճշդեն գործընթացի յաջորդական հանգրուաններ: Չէ՞ք խորհիր որ նախագիծերու կետերէն մասնաւորաբար երեքին պարագային կարելի է ենթադրել թէ անոնք կրնան թաքուն նախապայմաններ ըլլալ Յեղասպանութեան ճանաչումին, Հայաստանի հողային պահանջներուն եւ Արցախի գոյավիճակին վերաբերեալ տարուող բանակցութիւններուն կապակցութեամբ:

Մենք կը հասկնանք, որ յարաբերութիւններու բնականոնացումի գործընթացը կարգաւորող նախագիծերը, արդիւնքն են երկար բանակցութիւններու՝ Հայաստանի, Թուրքիոյ եւ շրջանային իրադրութեամբ շահագրգիռ պետութիւններուն միջեւ: Անկասկած անոնք ունին առարկելի կետեր եւ զանոնք պետք է նկատել համաձայնութեան միջին եզրեր, բանակցող կողմերուն համար: Այդ նախագիծերը սակայն կը յատկանշուին այն գլխաւոր իրողութեամբ, որ այսօր անոնք Թուրքիան կը դնեն առանց նախապայմաններու սահմանները բանալու եւ՝ երկու երկիրներուն միջեւ դիւանագիտական եւ բնականոն յարաբերութիւններու զարգացման ձեռնարկելու պարտադրանքին առջեւ, նախ քան որեւէ այլ քայլերու գործադրութիւնը: Մեզի համար յստակ իրականութիւն է որ Թուրքիան, իբր Հայ ժողովուրդին հանդէպ ցեղասպանութիւն գործած եւ զայն ուրացող պետութիւն, շարունակաբար, աւելի քան հարիւր տարի, թշնամական քաղաքականութիւն վարած է Հայութեան եւ Հայաստանի նկատմամբ:

Անցնող տասնհինգ տարիներուն, սահմաններու փակումով ան շարունակած է իր թշնամական ընթացքը, ճնշում բանեցնելով Հայաստանի Հանրապետութեան վրայ, Յեղասպանութեան ճանաչումի հարցի հետապնդումին եւ Արցախի անկախութեան եւ ինքնորոշումի խնդիրներուն կապակցութեամբ զիջումներ ապահովելու նպատակով: Կասկած չունիք որ երբ նախագիծերու տրամադրութեանց համաձայն յարաբերութիւններու զարգացումը առաջ կը տարուի, Թուրքիա շարունակ պիտի փորձէ առկայ խնդիրներուն կապակցութեամբ իրեն ի շահ ձեռքբերումներ ապահովել: Սակայն այդ կարելիութեան դիմաց, լուծումը բանակցութիւններու մերժումը եւ Հայաստանի մեկուսացումը չէ, այլ իբր արդի եւ քաղաքակիրթ պետութիւն, շահագրգիռ պետութիւններու միջազգային կշիռը գործածելով, դիւանագիտական ձեռնհասութեամբ երկխօսութիւնը առաջ մղելն է:

Հայաստան-Թուրքիա յարաբերությունները չեն պայմանավորուիլր Լեռնային Ղարաբաղի իրավիճակի կարգավորման գործընթացով: Անոնք ոչ մեկ ժխտական ներգործություն կրնան ունենալ Ղարաբաղի անկախության, ապահովության եւ ինքնորոշման կապակցությամբ:

Այս մասին բազմիցս հաստատումներ կատարած են Հայաստանի Հանրապետության Նախագահը եւ Հայաստանի ու Ատրպեյճանի միջեւ բանակցությունները հովանավորող պետությունները: Ղարաբաղի ժողովուրդը եւ Հայաստան ծանր պայքար տարած են Ղարաբաղի համար: Հետեւաբար անոնք ղեկավարները ոչ մեկ պարագայի գիշում պիտի կատարեն իրենց հողային կամ ինքնորոշման իրաւունքներէն:

Ինչ կը վերաբերի Տեղասպանության ճանաչումի հարցին, հարիւր տարի զայն անտեսելու եւ խեղաթիւրելու իր փորձերէն ետք, եթէ Թուրքիոյ խորհրդարանը վաւերացնէ Նախագիծերու տրամադրութիւնը, Թուրքիա պիտի հարկադրուի իրողականօրէն դիմագրաւելու Տեղասպանության հարցի առկայութիւնը: Ի վերջոյ, Տեղասպանության հարցին կապակցությամբ Թուրք ժողովուրդին մօտ ծանօթացումի, գիտակցութեան եւ ճանաչումի մղող գործընթացը նոյնքան եւ անելի կարելոր է որքան այլ պետություններու կողմէ ճանաչումը:

Պատմական տուեալները վերանայելու համար առաջարկուած մարմինը, խորհրդածողով մըն է ուր երկու կողմերն ալ իրենց մասնակցութիւնը պիտի բերեն եւ կողմերէն որեւէ մէկը կրնայ դադրեցնել գործընթացը եթէ Տեղասպանության ճանաչումին կապակցությամբ հարցադրումի եւ կամ խեղաթիւրումի փորձ կատարուի:

Սահմաններու ճանաչումը կը որոշուի երկիրներու միջազգային ընտանիքին կողմէ կնքուած համաձայնութիւններով: Հայաստան կը դիմագրաւէ սահմաններու ներկայ իրադրութիւնը լռելեայն ընդունած ըլլալու իրողութիւնը, Միացեալ Ազգերու Կազմակերպութեան (ՄԱԿ) կամ Անկախ Պետութիւններու Հասարակապետութեան (ԱՊՀ) իր մասնակցությամբ: Հողային պահանջներու եւ իրաւական սահմաններու հարցի լուծումը, միջազգային մակարդակով բանակցություններու նիւթ պետք է դառնայ: Հայաստան պիտի չկարենայ այդ ուղղութեամբ ձեռքբերում կատարել ինքզինք միջազգային դիւանագիտական իրականութենէն մեկուսացնելով: Իբր լիիրաւ եւ օրինական պետութիւն, բանակցություններու մասնակցելով եւ երկխօսութիւնը ի շահ իր իրաւունքներուն առաջ մղելով է որ հայ ժողովուրդը ձեռք պիտի բերէ իր պատմական իրաւունքները: Մեր ուժերու համադրումը այդ գործելակերպին ուղղութեամբ անելի արդիւնաւոր պիտի ըլլայ քան մերժողական կեցուածքը:

Համաձայնագրեր որեւէ ատեն կատարեալ վաւերագրեր չեն: Անոնք սովորաբար արդիւնք են երկու կողմերու միջեւ բանակցութեանց, որոնց ընթացքին իւրաքանչիւր կողմ կը հետապնդէ իր շահերը: Մենք կը հաւատանք, թէ համաշխարհայնացումի այս դարուն, Հայաստան պետք չէ ինքզինք մեկուսացնէ: Ատիկա կազմալուծումի յանգող կեցուածք մըն է: Ինքնավստահությամբ, անկախ ժողովրդավար պետութեան օրինական եւ տնտեսական հաստատուն կառոյցներու ստեղծումով եւ ազատ տնտեսութեան յաւելեալ ուղիներ բանալու նախաձեռնությամբ է որ Հայաստան պիտի կարենայ դիմագրաւել մերօրեայ մարտահրաւերները: Հայաստան չի կրնար անտեսել Ռուսիոյ, Միացեալ Նահանգներու, Ֆրանսայի եւ այլ ուժերու կշիռը այս գործընթացին մէջ: Պետութիւններ, որոնք առաւելաբար թիկունք եղած են ի շահ Հայաստանին: Անոնք լուրջ կարելորութիւն

կու տան այս բանակցութիւններուն եւ կը հովանաւորեն զանոնք: Յետեւաբար անխոհեմութիւն պիտի ըլլայ Յայաստանի համար այս հանգրուանին ժխտական դիրք ճշդել եւ մասնակից չդառնալ երկխօսութեան:

Հարցում - Իբր ոչ-քաղաքական կազմակերպութիւն, ինչու՞ Յ.Բ.Ը.Մ.ը կը դիրքորոշուի այս հարցին նկատմամբ, որ գլխաւորաբար քաղաքական բնոյթ ունի:

Յ.Բ.Ը.Մ.ը ապակուսակցական համահայկական կազմակերպութիւն է: Իր բնութեամբ սակայն, Միութեան նպատակներուն հիմքը կազմած են ազգային հիմնախնդիրներ, որոնք կը վերաբերին մեր ժողովուրդի գոյապահպանումին եւ անվտանգութեան, Յայաստանի բարօրութեան եւ բարգաւաճումին եւ մեր ազգային դիմագիծի եւ մշակութային ժառանգութեան պահպանումին: Իր հարիւրամեայ պատմութեան ամբողջ ընթացքին, Յ.Բ.Ը.Մ.ի կողմնորոշումները եւ գործունէութիւնը, անհրաժեշտ դարցուցած են քաղաքական շփումներ:

Յ.Բ.Ը.Մ.ը շարունակաբար եւ գործնապէս մասնակից եղած է հայ ժողովուրդի ազգային իրաւունքներու հետապնդման աշխատանքներուն, տեղական թէ միջազգային մակարդակներու վրայ, յատկապէս Ա. Յամաշխարհային Պատերազմի աւարտին եւ Յայաստանի Առաջին Յանրապետութեան ընթացքին: Միութեան Յիմնադիր Նախագահ Պօղոս Նուպար Փաշա, կը գլխաւորէր 1919-ի Փարիզի Խաղաղութեան Յամագումարին մասնակցող Յայ Ազգային Պատուիրակութիւնը: Աւելի ուշ, Խորհրդային իշխանութեան ժամանակաշրջանին, Յ.Բ.Ը.Մ.ը իբր Սփիւռքահայ կազմակերպութիւն ներկայացուցչական գրասենեակ պահեց Յայաստանի մէջ: Հակառակ օրուան իրաւակարգին կողմէ Միութեան ներկայացուցիչին դիմագրաւած հալածանքներուն, Պօղոս Նուպար Յայաստանի մէջ նախաձեռնեց առողջապահական, կրթական եւ հրատարակչական կառոյցներու ստեղծումին:

Ան միաժամանակ իրականացուց Նուպարաշէն աւանի շինութեան աննախընթաց ծրագիրը: Աշխատանք մը, որուն գործադրութեան հանգրուանները կը պահանջէին անդուլ բանակցութիւններ Խորհրդային իշխանաւորներու թշնամական տրամադրութիւններուն եւ արգելքներուն դէմ:

Պօղոս Նուպարի յաջորդ՝ Նախագահ Գալուստ Կիւլպէնկեան, կարելոր դեր կատարեց Ֆրանսական Խնամատարութեան տակ գտնուող Սուրիոյ եւ Լիբանանի մէջ հայ գաղթական զանգուածներու բնակեցումի եւ հաստատման կապակցութեամբ, Ֆրանսական Խնամատարութեան պատասխանատուներուն հետ իր կատարած բանակցութիւններով, որոնց արդիւնքն էր Պուրճ Յամուտի, Այնճարի եւ բազմաթիւ այլ հայկական շրջաններու եւ թաղամասերու ստեղծումը:

Արշակ Գարակեօզեանի նախագահութեան շրջանին, 1946-ին, քաղաքական եւ տնտեսական դժուար պայմաններու տակ, Յ.Բ.Ը.Մ.ը ստանձնեց 100,000-է աւելի հայերու Յայաստան փոխադրութեան ծախսերը: Ասիկա ինքնին քաղաքական կարելոր նախաձեռնութիւն մըն էր, որ պատմական կարելոր նշանակութիւն ունեցաւ մեր ազգին համար:

Պաղ Պատերազմի տարիներուն, Նախագահ Ալեք Մանուկեանի գործարար առաջնորդի վարած հեռատես եւ ճկուն քաղաքականութիւնը կարելի դարձուց այդ շրջանին հեզասահ ձեւով վարել Յայաստանի օժանդակութեան աշխատանքները, միաժամանակ Սփիւռքի մէջ ստեղծելով հայապահպանումի հոյակապ կառոյցներ: Իսկ սորագոյն ժամանակներուն, Լուիզ Մանուկեան Սիմոնի նախագահութեան շրջանին,

1988-ի երկրաշարժի աղետեն անմիջապես ետք, Հայաստանի ժողովուրդին օգնության հասնող առաջին ու գլխաւոր կազմակերպութիւններէն մին եղաւ Հ.Բ.Ը.Մ.ը: Այդ օժանդակութեան միջոցաւ կարելի եղաւ ապահովել հայրենի մշակութային հիմնական կառոյցներու պահպանումը, Հայաստանի նորանկախ Հանրապետութեան հզօրացումը, միաժամանակ օժանդակելով Արցախի ազատագրումի եւ անկախութեան գոյապայքարին:

Միութեան Եւրոպայի շրջանակը, աշխոյժ գործունեութիւն կը վարէ Եւրոպական շրջանակներու մօտ Լեռնային Ղարաբաղի Հայութեան պատմական իրաւունքներուն եւ ինքնորոշման իրաւունքի ծանօթացումին ուղղութեամբ՝ գիտահետազօտական կեդրոններու գործակցութեամբ եւ միջազգային համագումարներու կազմակերպումով: Ներկայ հանգրուանին, անսովոր չէ, այլ Հ.Բ.Ը.Միութեան պարտականութիւնն է, իր խօսքը ունենալ Հայաստան-Թուրքիա յարաբերութիւններու բնականոնացումին ուղղութեամբ կատարուած նախաձեռնութեան մասին:

AGBU President Berge Setrakian Addresses Questions on the Protocols for the Process of Normalization of Relations Between Armenia and Turkey

On Friday, October 16, 2009, AGBU President Berge Setrakian and members of the AGBU Central Board of Directors attended a special forum at the AGBU Center in Pasadena, California. The event was attended by leaders of AGBU's chapters and committees in Southern California and it provided local Armenian Americans the opportunity to ask about AGBU's position in support of the Protocols for the Process of Normalization of Relations between Armenia and Turkey.

The following are the key issues discussed during the event and President Setrakian's responses to the questions.

Q: AGBU was one of the first organizations that took a stand in support of the Armenia-Turkey normalization process, and it was also one of the five signatories of a joint statement in support of the process. Why did AGBU extend its support to the initiative of the Armenian government?

Berge Setrakian: In connection with the normalization process of relations between Armenia and Turkey and the opening of the borders, we believe that the President of the Republic of Armenia has exercised strong leadership and a realistic understanding of the state of affairs of regional and international diplomacy. He has acted as a responsible leader taking a bold and somewhat difficult step forward.

We know that this process was not easy to engage, as it represents significant challenges for the President and for all Armenians. We believe it is important for the Armenian authorities to have the trust, support, and feedback of the people in order to be able to negotiate from a position of strength, and face any difficulties ahead. We all know that this will be a long and arduous exercise, which will involve hard choices and diplomatic maneuvers that Armenians will have to understand in order to navigate. Though the end result is still unknown, the initiative and the attempt to resolve our issues at hand are worth a genuine effort. We must remember the past and fight realistically for our rights, while looking forward to build a strong future.

Q: How do you evaluate the RA President's visit to the diasporan communities and don't you think that this issue has caused division among our people and threatens to disconnect Armenia from the diaspora.

Setrakian: The recent visit of the president of Armenia to the main communities and organizations of the diaspora presented an opportunity for sincere and sometimes heated exchange of viewpoints by various sectors of the Armenian Diaspora. In the final analysis, we believe that President Sargsian will weigh all the various arguments and concerns and decide a course of action that reflects the best interests of Armenia and Armenians.

It became apparent from the perspectives conveyed about the initiative for the normalization of relations between Armenia and Turkey that the Armenian diaspora, insofar as its notion of the status quo is concerned, is not a monolithic society and it is not possible to force it to act like one. However, it is necessary to distinguish between diversity regarding procedural issues and positions on matters of principle. Differences in approach to the issues at hand should all be respected, and do not necessarily mean a split when there is unanimity concerning the ultimate outcome. We, for instance, take a pragmatic stand and believe that in this era of global geopolitics it is more realistic for us to try to pursue our rightful demands through diplomacy and direct negotiations with neighboring states, rather than through other means, which, so far, for almost a century, have not yielded any concrete positive results.

Q: You mentioned that the protocols do not constitute preconditions yet they set predetermined steps charting the process of opening the borders and normalization of bilateral relations. Don't you feel that at least three items of the protocols imply potential concessions regarding the issue of the Genocide, Armenia's territorial demands of Turkey and the ongoing negotiations regarding the status of Karabakh.

Setrakian: We all understand that the protocols regulating the process of normalization of relations between Armenia and Turkey are the result of lengthy

negotiations involving Armenia, Turkey, and other states that have a stake in the geopolitical developments of the region. The current documents are not perfect and should be viewed as a possible compromise reached between the parties involved. However, what they primarily signify today is the fact that they put Turkey under the obligation to open the borders and pursue the development of normal diplomatic relations between the two countries prior to any further steps.

We are well cognizant of the fact that Turkey is a state that committed genocide against the Armenian people and has consistently and systematically denied it for the past hundred years. It has conducted a hostile policy with regard to the Armenian people and Armenia. Over the past 15 years, through the closing of the borders, it has exerted pressure on the Republic of Armenia to force it to relinquish the pursuit of the issue of Genocide recognition, as well as the independence and self-determination of Karabakh. We have no doubt that when the development of relations takes course, according to the dispositions of the protocols, Turkey will continuously try to push its own agenda in connection with the issues at hand. However, faced with that possibility, the solution is not the refusal to negotiate and the isolation of Armenia; rather, it is the promotion of dialogue, as a modern civilized nation exercising diplomatic expertise and using the leverage of the international powers that have a stake in the outcome.

It has been repeatedly confirmed by the President of Armenia and the major mediating nations that the process of normalization of relations between Armenia and Turkey are not conditioned by the process of determining the status of Karabakh. This process has no negative bearing on its independence, security, and right of self-determination. The people of Karabakh and Armenia have fought hard and their leaders will under no circumstance forfeit their territorial rights and their claim for self-determination.

As far as the matter of Genocide recognition is concerned, if the Turkish parliament ratifies the protocols, Turkey will be forced to realistically face the existence of the Genocide issue after ignoring it and attempting to distort it over the past hundred years. In the final analysis, in connection with the Genocide issue, the process that may drive the Turkish people to become aware of, explore, and acknowledge the historical reality of the Genocide and consequent reparations, is equally, if not more important than the recognition by other countries.

The commission referred to will constitute a forum where both sides can share, and either party will be able to walk away if a fair and just solution to the recognition of the genocide is not reached.

The issue of the existing borders is determined by the international community of nations and Armenia faces the reality of having inherently accepted these borders

through its membership in the UN or the CIS. Again, Armenia will not be able to affect the resolution of the issue of territorial demands and legal borders by isolating itself from the international diplomatic stage. As a full-fledged legitimate state, it is by participating in negotiations and promoting dialogue in defense of its demands that Armenia will pursue its historical rights. The pulling together of the energies of all Armenians towards such a process will be more productive than a dismissive stance.

A contract is never a perfect document. It is the result of negotiations between parties pursuing their respective interests. I would like to reiterate, that in this era of globalization, Armenia cannot isolate itself. That would lead to eventual disintegration. It is through self-confidence, the creation of stable legal and economic structures for an independent and democratic statehood, and opening additional paths in a free-market economy that Armenia will be able to face the challenges of our times.

Armenia cannot ignore the importance of the involvement of Russia, the USA, France and other powers in this process – powers that have long supported Armenia and its interests. This is a negotiation those parties endorse, making it highly imprudent for Armenia not to engage and refuse to be part of the process.

Q: Why did AGBU, a non-political organization, choose to be involved in this matter, which is perceived as political in nature.

Setrakian: The Armenian General Benevolent Union is a non-political all-Armenian organization. By its very nature, issues of Armenian national interest such as the survival and security of our people, development and prosperity of Armenia, and the preservation of our heritage and identity with all that it entails, have been at the core of its existence and mission.

All along its history, AGBU's policies and activities have necessarily involved civil political involvement. The Armenian General Benevolent Union was instrumental in pressing for a number of Armenian claims during the international political negotiations in the aftermath of World War I and during the tenure of the first Armenian Republic. Boghos Nubar Pasha headed the Armenian National Delegation at the Paris Peace Conference in 1919. Later, during the Soviet period, AGBU maintained, as a Diasporan Armenian organization, a representation office in Armenia and its representative was victimized by the regime; nevertheless, Boghos Nubar undertook major projects in Armenia, including the establishment of major medical and educational facilities in Yerevan, and developing the ambitious plan of the town of Nubarashen, tirelessly working through the operational and political challenges for its construction.

Years later, Calouste Gulbenkian, then President of AGBU, was instrumental in

negotiating with representatives of the French Mandate in Lebanon and Syria, the establishment on a permanent basis of Armenian refugees, including the creation of Bourdj Hammoud, Ainjar, and numerous other Armenian quarters.

During the presidency of Arshag Karageozian, in 1946 the AGBU financed under difficult political circumstances the repatriation of more than 100,000 Armenians to Armenia. It was a major political effort with a historical impact for the future of our nation. It was later the foresight of Alex Manoogian to continue AGBU's support of the motherland through the treacherous years of the Cold War, creating infrastructure that would strengthen Armenia through its independence while preserving and promoting the Armenian identity and heritage in the diaspora.

During the presidency of Louise Manoogian Simone, AGBU was one of the first organizations to come to the aid of Armenia after the catastrophic earthquake of 1988. Those efforts helped to maintain our cultural and religious infrastructures and strengthen the newly-independent Republic of Armenia. The organization further extended its support to Karabakh in its struggle for independence and self-determination.

AGBU continues to play a critical role in Europe by developing awareness about the historical rights of Armenians in the Republic of Nagorno Karabakh, through collaboration with scientific research organizations and international political forums.

At this juncture, it is not unusual but, in fact it is AGBU's duty to speak up and express its viewpoint on the Armenia-Turkey Protocols.